Ascend Armenia մրցարշավի ձեռնարկը կենդանի փաստաթուղթ է, որը մշտապես կթարմացվի, մինչև միջոցառման սկիզբը՝ 2023 թվականի հունիսի 25-ը:

Վերջին թարմացումները՝ *2023* թվականի հունվարի *19:*

Ներածություն

Ascend Armenia-ն հրավեր է և սիրո աշխատանք: Այստեղ միջոցառում կազմակերպելու գաղափարի ձևավորման օրվանից երկու տարվա ընթացքում տասնյակ մարդիկ՝ ժամանակ, արցունքներ և կիրք են ներդրել՝ ստեղծելու գեղեցիկ, դժվարին հաղթահարելի հեծանվային միջոցառում, որը ողջ աշխարհից մարդկանց կընդունի՝ բացահայտելու և ուսումնասիրելու այս փոքրիկ, բայց գեղեցիկ երկիրը:

Ascend Armenia-ի գլխամասային գրասենյակը գտնվում է Երևանում՝ Հայաստանում, բաղկացած է աշխարհով մեկ սփռված մասնագետներից, ովքեր աշխատում են մեկ ընդհանուր գաղափարի շուրջ: Մեր մրցարշավը կազմակերպվում է հանուն երկրի բարօրության: Կազմակերպելով այն՝ մենք հուսով ենք, որ կխրախուսենք ավելի շատ մարդկանց ամբողջ աշխարհից այցելել, հեծանիվ վարել և սիրել այս վայրը, ինչպես մենք: Հուսով ենք, որ այս միջոցառումը կազմակերպելով մենք կարող ենք մեծացնել զբոսաշրջությունը և օգտակար լինել տեղական տնտեսության զարգացմանը: Մենք նաև հույս ունենք այս միջոցառումների միջոցով խրախուսել և աջակցել հայ հեծանվորդներին:

Մրցավազքի աջակիցներ

Մենք ցանկանում ենք շնորհակալություն հայտնել հետևյալ ապրանքանիշերին, որոնք օգնել և օգնում են այս միջոցոռման իրականացմանը:

Rodeo Adventure Labs: ճանապարհների հետախուզական աշխատանքների և գծման աջակցություն, մեդիա աջակցություն

Ride With GPS: Քարտեզագրման աջակցություն: Յուրաքանչյուր մրցարշավորդի կտրվի պրոմո կոդ լիիրավ անդամակցության համար (2023), որպեսզի նրանք կարողանան

առավելագույնս օգտագործել մրցավազքի քարտեզը և դրա մանրամասն տեղեկատվությունը, որը պահվում է Ride With GPS մրցավազքի քարտեզում:

Tailfin Cycling: Tailfin-ը պատրաստում է մեր սիրելի՝ հեծանվորդների համար նախատեսված պայուսակներն ու հանդերձանքը: Մենք ոչ մի այլ տեղ չենք տեսել նորարարության և մանրուքների նկատմամբ ուշադրության այսպիսի մակարդակ, որը նրանք շարունակաբար ներդնում են իրենց արտադրանքներում: Թեյլֆինը առատաձեռն է եղել սարքավորումների և նյութատեխնիկական աջակցության մեջ նաև մեր հետախուզական քարտեզագրման աշխատանքների ժամանակ:

Մրցավազքի արժեքը

Ascend Armenia-ն արժե 300 դոլար մեկ մրցարշավորդի համար:Զույգերով կամ էստաֆետային կատեգորիաներում յուրաքանչյուր մրցարշավորդը հաշվվում է որպես եզակի գրանցում / արժեք:

Մրցավազքի վճարները ուղղակիորեն վճարվում են մեր՝ Հայաստանում գտնվող մրցարշավային կազմակերպությանը, իսկ հասույթը պահվում է երկրում՝ օգուտ բերելու տեղական հեծանվային համայնքին և զբոսաշրջությանը, նաև նոր աշխատատեղեր ստեղծելու համար:

Հայաստան՝ Ներածություն

Հայաստան wikipedia

Ճանապարհային լոգիստիկա

Ճանապարհին օթևանելու լավագույն տարբերակը ճամբարելն է, կամ վրանը կամ քնապարկը:Ամբողջ ճանապարհին ճամբարի հարմար վայրեր գտնելու հետ կապված

խնդիրներ չենք ունեցել, և հազվագյուտ դեպքում, երբ մեզ նկատել են տեղացիները առարկություններ չեն եղել:

Ճանապարհին կացարանը ավելի լավ է գտնել հյուրատներում կամ հանրակացարաններում: Google-ն աշխատում է Հայաստանում, բայց կարող է ունենալ ոչ արդի տեղեկատվություն: Yandex-ը՝ Google-ի ռուսերեն տարբերակը, հավանաբար, ունի ավելի ճշգրիտ և արդի տեղեկատվություն:

Ճանապարհի երկայնքով կան AirBnb որոշ վայրեր: Տեղացիները բարեհամբույր են և հյուրընկալ: Նույնիսկ, եթե դուք հայերեն կամ ռուսերեն չեք խոսում, Google Translate-ը հիանալի գործիք է օգնություն խնդրելու համար, եթե դուք փնտրում եք լոգիստիկ տեղեկատվություն ճանապարհի վերաբերյալ:
 Ճանապարհի երկայնքով ջուրն առատ է: Նույնիսկ օգոստոսի վերջին շատ չոր ամիսներին մենք ջուր հայթհայթելու դժվարություն չունեինք: Ճանապարհի երկայնքով գտնվող քաղաքներում ու գյուղերում ուտելիք գտնելը դժվար չէ: Փոքր գյուղերում կան փոքր խանութներ, որոնք վաճառում են սովորական արագ սնունդ (խորտիկներ, ջուր, գարեջուր, պաղպաղակ): Դուք կարող եք գտնել փոքր հացաբուլկեղենի խանութներ, որտեղ հաց, լավաշ կամ թխվածքաբլիթ են պատրաստում:

Մրցարշավորդներին առաջարկում ենք Երևանում գնել տեղական հայկական sim-քարտ մինչև մրցավազքի մեկնարկը: Հայկական sim-ը ձեզ հասանելիություն կտա բջջային ցանցին և համեմատաբար էժան են՝ նախապես բեռնված մոտ 10 գիգաբայթ տվյալների դեպքում: Մենք պարզել ենք, որ երթուղու մոտ 70-80%-ը ծածկված է բջջային աշտարակներով:

VIVACELL- https://www.mts.am/ (better coverage)
UCOM - https://www.ucom.am/hy/personal/

Ճանապարհային տեղեկատվություն

Հայաստանը բարձր լեռնային շրջաններում գյուղատնտեսական և հովիվային բարձր ակտիվություն ունեցող երկիր է: Բոլոր հովիվները ունեն շների ոհմակ՝ իրենց հոտը պաշտպանելու համար, և ոհմակի չափը տարբեր է՝ կախված հոտի չափից: Հայաստանում շների կհանդիպեք,որոնք կհաչեն ու պաշտպանողական դիրք կընդունեն:Հիշեք, որ այդ շները պաշտպաններ են, ոչ թե ագրեսորներ: Երբ մոտենում եք շանը կամ նախիրին, ավելի լավ է իջնել և պարզապես քայլել շների կողքով քայլելու արագությամբ, այլ ոչ թե փորձել վազել: Շները կարող են քայլել ձեր կողքով կամ մի փոքր հետևել ձեզ, բայց նրանք կդադարեն հետապնդել ձեզ, երբ դուք անցնեք և հեռանաք նախիրից կամ ճամբարից: Ձեր հեծանիվը ձեր և շան միջև դնելը լավ տեխնիկա է, որը մենք օգտագործել ենք: Եթե շները շատ էին մոտենում մենք քարեր էինք նետում կամ բղավում նրանց վրա:

Ճամբարների մոտակայքում հովիվը կարող է օգնել ձեզ կամ հետ կանչել շանը: Քաղաքների շները աներևակայելի ընկերասեր են, և ոմանք հետաքրքրասիրությունից դրդված հետևել են մեզ բազմաթիվ կիլոմետրեր:

Եղանակի նկարագրություն

Հունիսի վերջին և հուլիսի սկզբին եղանակը Հայաստանում սովորաբար բարեխառն է և փոփոխական: Ամառային շոգերը դեռ չեն սկսվում, իսկ գարնանային անկանխատեսելի եղանակը դեռ իրեն դրսևորելու ներուժ է ունենում: Ասել է թե՝ հունիսի վերջը Հայաստան այցելելու ամենագեղեցիկ ժամանակներից մեկն է: Ամբողջ երկիրը փթթում է ձմեռային ձնհալիքից և գարնանային անձրևներից: Երկրի զգալի մասը կանաչապատ է և ծածկված վայրի ծաղիկներով: Բարձրադիր վայրերում ձյունը հալչում է, իսկ առուները վարարում են:

Մրցարշավորդները պետք է պատրաստ լինեն եղանակային պայմանների բազմազանությանը: Պետք է խստորեն հաշվի առնել խոնավ եղանակին անհրաժեշտ սարքավորումները: Պետք է հաշվի առնել նաև ցուրտ եղանակի համար նախատեսված հանդերձանքը և այն հանդերձանքը, որը անհրաժեշտ է երթևեկության այն հատվածների համար, որտեղ դեռ ձմռան ազդեցությունն է տիրում:
Անկախ եղանակային պայմաններից, կարևոր է միշտ հիշել, որ Հայաստանը լեռնային երկիր է: Լեռնային եղանակը խաղում է իր կանոններով. Փոթորիկները կարող են զարգանալ արագ և ուժգնությամբ, կամ կարող է օրեր շարունակ գրեթե անամպ երկնք լինել:

Բարձրադիր վայրերում հնարավոր է ամպրոպ ՝ կայծակներով և որոտով ուղեկցվող: Ճանապարհի որոշ հատվածներ բացարձակապես զերծ են ծառերից, ուստի կայծակնային անվտանգությանը և ծանոթ լինելը պարտադիր է այս մրցավազքի համար:
Մեր հետախուզական աշխատանքների ընթացքում մենք ունեցել ենք միայն մեկ կայծակներով ուղեկվցող երեկո, բայց նույնիսկ մեկ երեկոն բավական է հիշեցնելու, որ բնության հանդեպ հարգանքը և գիտելիքները պարտադիր է բոլոր լեռնային արկածների համար:
Հունիսի վերջին ճանապարհները կարող են ցեխոտ լինել՝ ուստի պատրաստեք ձեր անվադողերը նաև նման պայմանների համար:

Ճանապարհի նկարագրություն /

քարտեզ

Մենք դեռ աշխատանքներ ենք տանում քարտեզագրման վրա, սակայն մրցավազքի հիմնական քարտեզը կարելի է գտնել այստեղ.

https://ridewithgps.com/routes/40365347

Մենք մեքենաներով և հեծանիվներով անցել ենք Ascend Armenia-ի ողջ ճանապարհը և շատ քրտնաջան աշխատել՝ ստեղծելու համար անցանելի, հաղթահարելի, դժվարին և գեղեցիկ ճանապարհ:
Մենք աշխատում ենք տեղացիների և խորհրդատուների հետ՝ ճանապարհը թարմացնելու համար, օրինակ, եթե , ցեխի սահքի պատճառով փոխվել է ճանապարհը, կամ եթե ճանապարհաշինարարական աշխատանքներ են կատարվում, կամ եթե մենք գտնում ենք ավելի գեղեցիկ ճանապարհ լեռան վրայով մենք փոխում ենք ուղղին:
Ճանապարհի մեծ մասը ասֆալտապատ չէ: Հավանաբար, 5-10%-ն է ծածկված ասֆալտով: Մնացածը հողոտ, քարքարոտ ճանապարհներ են:

Տեղական կոնֆլիկտի կարգավիճակ / ուղեցույց

Հայաստանը գտնվում է Ադրբեջանի հետ երկարատև սահմանային հակամարտության մեջ, որը տևել է տասնամյակներ: Վերջին հակամարտությունները բռնկվեցին 2020 թվականին, այնուհետև նորից 2022 թվականի սեպտեմբերին՝ մեր երկրորդ խոշոր հեծանվային-հետախուզական արշավից հետո:
Մենք ուշադիր հետևում ենք հակամարտությանը որպես Հայաստանի բնակիչներ ինչպես նաև մրցարշավի կազմակերպիչներ՝ մտահոգված լինելով մեր հեծանվորդների անվտանգությամբ: Թեև ճիշտ է, որ լարվածությունն ու ակտիվությունը ցանկացած պահի կարող են սրվել սահմաններին, մենք կարծում ենք, որ հակամարտությունը վերջին շրջանում անկման միտում է գրանցել և սահմանափակվել է սահմանամերձ շրջաններով:
Մենք աշխատանքներ ենք տանում որպեսզի մեր ճանապարհները հեռու լինեն խնդրահարույց տարածքներից:

Որպես հեծանվորդներ, ովքեր հետախուզել են և վարել Asced Armenia-ի ճանապարհները,

մենք չենք ունեցել որևէ բացասական անձնական փորձ հակամարտության վերաբերյալ: Մենք մեզ ամբողջապես ապահով ենք զգացել երկրի ամբողջ տարածքում: Մաղթում ենք այս հակամարտության խաղաղություն և դիվանագիտական լուծում: Ինչպես մեզանից շատերը, այնպես էլ հայերը ցանկանում են իրենց կյանքն ապրել խաղաղության և բարգավաճման մեջ:

Եթե որևէ այնպիսի իրավիճակ ստեղծվի, որը կստիպի մեզ որոշել, որ անվտանգ չէ անցկացնել մրցարշավը, մենք կտեղեկացնենք բոլոր մրցարշավորդներին և կվերադարձնենք մրցավազքի մուտքի վճարները:

Մեր մրցավազքը կազմակերպվել է ազգային և տեղական ինքնակառավարման մարմինների և ոստիկանության թույլտվությամբ և համագործակցությամբ, որոնք պլանավորման գործընթացում առաջարկում են լրացուցիչ խորհուրդներ և ուղղորդումներ:
Ճանապարհորդության համար մենք կարծում ենք, որ ՄԻԾՏ խելամիտ է, ունենալ ապահովագրություն հետագայում վնասներ չկրելու համար:

Կրկին. Անվտանգությունը միշտ առաջնահերթություն համարելով, մենք ուրախ կլինենք տեսնել ձեզ մեզ հետ Հայաստանում մրցավազքին մասնակցելիս:

Մրցավազքի ձևաչափեր/կատեգորիաներ

Ascend Armenia-ն թույլ է տալիս մրցարշավորդներին մրցել երեք տարբեր մրցարշավային ձևաչափերով: Յուրաքանչյուր կատեգորիա ժամանակային առումով լինելու տարբեր և գնահատվելու է ինքնուրույն: Տարբեր կատեգորիաների մրցարշավորդները չեն մրցում միմյանց դեմ:
Տարբեր կատեգորիաների հեծանվորդներից կպահանջվի պահպանել մրցավազքի բոլոր կանոնները, ներառյալ չհամագործակցել այլ հեծանվորդների հետ, բացառությամբ <<զույգերով>> կատեգորիայի:

- Սոլո. Միայնակ հեծանվորդը կավարտի ամբողջ մրցավազքի ընթացքը սեփական ուժերով՝ համաշխարհային մրցավազքի կանոններին համապատասխան և իրադարձության ողջ ընթացքում կպահպանի GPS-ը ակտիվ՝ պահելով այն իր մոտ:

- Ռելե. Էստաֆետային թիմերը բաղկացած են (2? 3? Հեծանվորդներից): Էստաֆետային հեծանվորդները կարող են կոլեկտիվ վարել ամբողջ մրցավազքի ընթացքը՝ էստաֆետային զույգի երկու հեծանվորդների համատեղ ջանքերով:
Էստաֆետային հեծանվորդները կարող են փոխանակել էստաֆետային դերերը ընթացքի ցանկացած կետում, որը նրանք կորոշեն, և այնքան անգամ, որքան կցանկանան փոխանակել: Հետագծման մեկ սարքը պետք է փոխանցվի մեկ հեծանվորդից մյուսին,

ամեն անգամ, երբ փոխանակումը տեղի է ունենում: Հեծանվորդները ովքեր փոխանակվում են ինչ-որ կետում պետք է ինքնուրույն ապահովեն իրենց տրանսպորտը: Որքան շատ փոխանակման կետեր ունենա թիմը այնքան շատ տրանսպորտային տարբերակների անհրաժեշտություն կլինի ու ընթացքն էլ կբարդանա:

Դուո. Զույգերով կատեգորիան բաղկացած է երկու հեծանվորդներից, որոնք պետք է ավարտեն ամբողջ ընթացքը միմյանց ընկերակցությամբ: Դուո-ի երկու հեծանվորդներն էլ պետք է ունենան անձնական հետագծող սարքեր՝ ստուգելու համար, որ Դուո-ի արշավորդները միասին են մնում ճանապարհի ողջ ընթացքում: Դուո հեծանվորդները մրցավազքի ընթացքում երբեք միմյանցից 50 մ-ից ավելի հեռավորություն չեն կարող ունենալ:

Մրցավազքի կանոններ

Մենք նախընտրեցինք չծանրացնել մրցավազքը անվերջ հատուկ կանոններով, փոխարենը մենք դիմում ենք բոլոր մրցարշավորդներին հավատարիմ մնալ ինքնակառավարվող և կազմակերվող մտածելակերպին: Որոշ մրցարշավորդներ գալու են Հայաստան՝ հաղթելու. Որոշ մրցարշավորդներ գալու են Հայաստան ամբողջ մրցուղին անցնելու համար՝ վայելելով ընդհանուր մրցավազքի կոլեկտիվությունը: Մրցավազքի կանոնները խախտելը կզրկի ձեզ և մյուսներին իրավահավասար և արդար մրցավազք ունենալուց: Ցանկացած հեծանվորդ, ով կխախտի ինքնակառավարվող մրցավազքի կանոնները, չի համարվի մրցուղին հաղթհարած:

- Պահպանեք արդարության ոգին:

-Սոլո կատեգորիան նշանակում է միայնակ մրցավազք և դուք չպետք է համախմբվեք և այլ մասնակցի հետ քննարկեք ու որոշումներ կայացնեք: Երկու տարբեր հեծանվորդներ չունեն նույն ռազմավարությունը, սովորությունները, քնի պահանջները, լոգարանի կարիքները և այլն: Մի քանի ժամ միասին վարելը նորմալ է թվում սակայն միասին շարունակելը խախտում է սոլո և դուո կատեգորիաների կանոնները:

-Հեծանվորդը պետք է հետևի տրված պաշտոնական երթուղու ուղուն սկզբից մինչև վերջ, որպեսզի համարվի ավարտող: Երթուղուց դուրս գալը լավ է, պարզապես թողեք և մուտք գործեք ուղին նույն (ճշգրիտ!) տեղում: Բացի այդ, ճանապարհները կարող են մի փոքր փոխվել սեզոնից սեզոն: Երթուղին նույնպես բավական դժվար կլինի, և ցեխոտ, հողոտ ճանապարհի կողքին կա հարթ հողային ճանապարհ, անցեք հարթ հողոտ ճանապարհով: ԲԱՅՑ, եթե հողային ճանապարհի կողքին ասֆալտապատ ճանապարհ կա, մի օգտագործեք ասֆալտապատը: Եթե ճանապարհի մեծ մասը ցեխածածկ է շրջանցեք այն,

որպեսզի չվնասեք ձեր հեծանիվը:

-Բոլոր ծանր ապրանքները/սարքավորումները պետք է տեղափոխվեն սկզբից մինչև վերջ: Սա նշանակում է, որ քնապարկերը, անձրևային պարագաները և այլն, նախքան ավարտին հասնելը, արգելվում է նետել կամ տալ ուրիշին: Չնայած ավարտելուց հետո ազատ զգացեք նվիրաբերեք ձեր սարքավորումները տեղացիներին: :)

-Աղբ նետելը, շրջակայքը աղտոտելը կհանգեցնի որակազրկման:Եկեք թողնենք Հայաստանը գոնե նույնքան մաքուր, ինչպիսին էր մինչև մեր գալը:

AA-ի թիմը կքննարկի ցանկացած կասկածելի իրավիճակ և, կունենա վերջնական խոսքը որոշման հարցում:

Կարևոր պարագաների պահանջներ

Որպես ինքնակառավորվող մրցույթի մասնակից յուրաքանչյուր հեծանվորդ պետք է ինքը հասկանա ինչ է իրեն անհրաժեշտ ճանապարհը հաղթահարելու համար: Սակայն սրանք են մեր նվազագույն և պարտադիր պահանջները.

-Լավ վիճակում գտնվող հեծանիվ
- Սաղավարտ
-Նոր արգելակներ և պահեստամասեր, որոնք ձեզ հետ պիտի տանեք
- Նման իրավիճակների համար նախատեսված ծածկոց/վերմակ
-Անվտանգության լույսեր - առջևի սպիտակ, հետևի կարմիր: Պետք է միացված լինի, երբ գտնվում է որևէ ասֆալտապատ մակերեսի վրա կամ քաղաքում կամ գյուղում է կամ մոտենում է դրանց
- Լուսանդրադարձնողներ առջևի և հետևի հատվածներում:Եթե ունեք ուսապարկեր նաև լուսանդրդրադարձնողներ՝ ուսապարկի վրա:.
- Սուլիչ
- ID / Անձնագիր կամ դրա լամինացված պատճենը
-Ascend Armenia կոնտակտային թերթիկ (կտրամադրենք). Լամինացված.

Մենք կստուգենք յուրաքանչյուր հեծանվորդի պարագաները նախքան մրցավազքի մեկնարկը՝ ստուգելու հանդերձանքի նվազագույն պահանջներին համապատասխանությունը: Մենք «հեծանիվների ստուգում» չենք իրականացնում՝ ստուգելու համար, որ ձեր հեծանիվը պատրաստ է ճանապարհի համար: Համապատասխան կարգավիճակում հեծանիվ ունենալը յուրաքանչյուր հեծանվորդի պարտավորվածությունն է:
Եթե ցանկանում եք ավելին իմանալ այն սարքավորումների մասին, որոնք մենք

օգտագործել ենք մեր Հայաստան այցի ժամանակ խնդրում ենք այսցելել մեր վեբ կայքի ռեսուրսների բաժին:

Հեծանվի պահանջներ

Ascend Armenia-ի համար լավագույն հեծանիվը արագության և հարմարավետության առումով լեռնային հեծանիվն է առջևի կախոցով, բայց դա չի նշանակում , որ դա միակ տեսակի հեծանիվն է , որ կարող եք օգտագործել ճանապարհը հաջող անցնելու համար:

Մենք մեզ հետ վերցրել էինք նաև գրավել հեծանիվներ՝ հաստ անիվներով, որոնք բավականին հարմար էին:

Լավ հեծանիվների կարևորագույն գործոններն են՝
-Հաստ անվադողեր (2,1 դյույմ / 54 սմ կամ ավել)
-Մագլցման մեխանիզմներ (34տ առջևի, 50տ հետևի բավարար է, 32տ առջևի, 52տ հետևի նույնպես կորող է լինել):
Երկակի արգելակով MTB-ն նույնպես բավականին հարմար է ընթացքի համար և, անշուշտ, թույլ կտա ձեզ ավելի ազատորեն կատարել վայրէջքները: Ascend Armenia-ն նաև Descend Armenia է:

Հետագծման սարքի պահանջներ (բերեք ձեր սեփականը)

Ascend Armenia-ն պատասխանատվություն չի կրում մրցարշավորդներին թրեքերներ տրամադրելու համար: Յուրաքանչյուր մրցարշավորդ պետք է իր հետ բերի իր գործող թրեքերը: Մենք օգտագործելու ենք Trackleaders-ը իրադարձություններին հետևելու համար: Trackleaders-ը վարձակալության է տրամադրում թրեքերներ: (հղումը կտրամադրվի)

Մենք կտրամադրենք ցուցումներ՝ նախքան մրցավազքի մեկնարկը թրեյքերները Trackleaders մրցավազքի քարտեզին միացնելու համար: Եթե մրցարշավորդները մտահոգված են տարբեր տարածաշրջաններում իրենց հասանելիությամբ, մենք կհետազոտենք և ինֆորմացիա կտրամադրենք հետագայում: (ապրիլ):

Spot trackers-ը և Garmin InReach-ի թրեքերները երկուսն էլ հարմար են:

Մրցավազքի ժամանակացույց

Ascend Armenia ճանապարհը հեռավորությամբ ամենաերկար մրցարշավը չէ, բայց համեմատաբար քիչ հարթ ճանապարհներ կան: Կարծում ենք, որ ընթացքը կտևի ավելի երկար, քան շատ մրցարշավորդներ ակնկալում են:

Մենք կունենանք մրցավազքի պաշտոնական ժամացույց, որը կսկսվի մրցավազքի մեկնարկի պահին և կավարտվի 203 ժամ / 8 օր հետո: Մրցարշավորդները, ովքեր կավարտեն այս ժամանակահատվածում,կհամարվեն որպես մրցավազքի ավարտողներ: Մենք ցանկանում ենք խրախուսել հեծանվորդներին, ովքեր չեն կարողանա ժամանակին ավարտին հասցնել մրցավազքը, շարունակել մինչև վերջ և ավարտել այն: Նրանք ովքեր ժամանակից ուշ կհաղթահարեն ճանապարհը կհամարվեն Ascend Armenia-ն ավարտածներ սակայն մրցույթից դուրս: Մրցարշավի ամբողջական ավարտից հետո ունենալու ենք երեկույթ նվիրված ռեյսերներին, կազմակերպիչներին և կամավորներին:

Ժամանակի ավարտից հետո մեր անձնակազմը այլևս չի հետևելու ձեր ուղղություններին և դուք կհամարվեք ինքնուրույն ճանապարհորդ: Մենք կարող ենք միայն օգնություն ցուցաբերել արտակարգ իրավիճակներում:

Հունիսի 24, 2023:

Ժամը 12:00-ից 15:00-ն մրցարշավի մասնակիցների գրանցում և հանդերձանքի պարտադիր ստուգում:
Ժամը 16:00 նախամրցարշավային հանդիպում / պարտադիր մասնակցություն:

Հունիսի 25, 2023.Մրցավազքի մեկնարկը ժամը 8:00-ին Երևանի Հանրապետության հրապարակումից
Հուլիսի 3, 2022. Պաշտոնական մրցավազքի ավարտ
Երեկույթի սկիզբ ժամը 19:00-ին Դիլիջանում:

Լոգիստիկա

-Սթարթի հյուրանոց - . Գտնվելու է Երևանի Հանրապետության հրապարակում մրցավազքի մեկնարկին մոտ: Մրցարշավորդները ստիպված չեն մնալ սկզբնական հյուրանոցում, բայց մենք կաշխատենք մեկնարկային հյուրանոցի հետ՝ բարենպաստ գներ կազմակերպելու համար: Մրցավազքից առաջ հանդիպումները / գրանցումը, ամենայն հավանականությամբ, կանցկացվեն մեկնարկային հյուրանոցում:

Ավարտի հյուրանոց. Մրվավազքը կավարտվի գեղեցիկ լեռնային Դիլիջան քաղաքի ֆինիշ հյուրանոցում: Մենք աշխատում ենք հյուրանոցի համար հարմար գործընկեր գտնելու համար: Մեր իդեալական ավարտի հյուրանոցը կունենա ողջամիտ գներ, մրցարշավորդների համար ճամբարի հնարավորություն, եթե նրանք ցանկանան, իսկ քաղցացած հեծանվորդները հեշտությամբ կարող են սնունդ գտնել:

-Դիլիջանը Երևանից ընդամենը 2,5 ժամ է: Պաշտոնական մրցարշավային տրանսպորտ չի տրամադրվի մինչև վերջ, բայց Դիլիջանից Երևան տաքսի գտնելը հեշտ է:

Մենք կապահովենք հեծանվային պայուսակների և մրցարշավային տեխնիկայի տեղափոխում Երևանից մինչև Դիլիջանի ավարտական հյուրանոց: Հանդերձանքի տեղափոխման բեռնատարը հստակ կնշվի: Մենք բոլոր ջանքերը կգործադրենք պայուսակները անվտանգ պահելու համար, բայց չենք կարող բացարձակ երաշխիք տալ մեր հսկողության տակ գտնվող պայուսակների անվտանգության համար: Խնդրում ենք տանը թողնել ցանկացած ոչ կարևոր արժեքավոր իրեր և մտածել պայուսակների համար կողպեքներ բերելու մասին:

-Առաջարկվում է օգտվել Qatar Airways-ից, եթե թռչում եք ԱՄՆ-ից, քանի որ Qatar Airways-ն առաջարկում է ամենաարագ և ուղիղ չվերթերը Հայաստանից/դրսից: Մենք կարծում ենք, որ դա օգնում է նվազեցնել պայուսակները և հեծանիվները փոխադրման ընթացքում կորցնելու վտանգը: Մտածեք գնել Airtags-ը և դրանք պահել ձեր հեծանիվով, եթե օգտագործում եք Apple-ի արտադրանքի էկոհամակարգը, քանի որ այն կարող է օգնել շատ հեշտությամբ գտնել կորցրած ուղեբեռը:

Պարտավորություններ / Ռիսկ

Հեծանիվ վարելը և հատկապես մեծ հեռավորության վրա հեծանիվ վարելը և մրցարշավելը ներհատուկ վտանգավոր գործողություններ են: Անկախ հեծանվորդի կամ մրցարշավորդի հմտությունից, վթարներ կարող են տեղի ունենալ, և ֆիզիկական վնասվածք/մահ կարող է առաջանալ այս մրցավազքին մասնակցելուց՝ վարորդի կամ երրորդ կողմի մեղքով: Հեծանվորդները/մրցարշավորդները, ովքեր անհարմար են զգում այս ռիսկի հետ կամ ովքեր չեն կարողանում ընդունել այդ ռիսկերը, չպետք է մասնակցեն այս կամ որևէ այլ հեծանվային/այսպիսի հեռավորության վրա գտնվող մրցարշավերի:

Ascend Armenia-ն կգործադրի բոլոր ջանքերը և արդեն զգալի ջանքեր է գործադրել մրցարշավորդների համար անցանելի և անվտանգ ճանապարհ ստեղծելու համար,

սակայն ռիսկը միշտ էլ գոյություն կունենա: Ascend Armenia-ն պատասխանատվություն չի կրի այս միջոցառմանը մասնակցող մրցարշավորդների կրած վնասների համար: Մինչև Հայաստան ժամանելը մրցարշավորդներին կտրամադրվի պատասխանատվությունից ազատում փաստաթուղթը, իսկ Ascend Armenia միջոցառմանը մասնակցելու համար մրցարշավորդները պետք է ստորագրեն այն:

Ascend Armenia-ն ԻՆՔՆԱՋԱԿՑՎՈՂ մրցավազք է: Յուրաքանչյուր մրցարշավորդի անվտանգությունն ու առողջությունը հենց և միայն յուրաքանչյուր մրցարշավորդի պատասխանատվության տակ է: Ascend Armenia-ի աշխատակիցները կհետևեն մասնակիցներին, կփորձեն օգնել սակայն պետք է հիշել, որ ոչ ոքի հնարավոր չի լինի ամեն պահ հետևել և չենք երաշխավորում, որ մենք կարող ենք արձագանքել արտակարգ իրավիճակներին մրցարշավորդների համար առավել շահավետ ժամկետներում: մենք կունենանք մրցավազքին հետևող շտապ օգնության բրիգադներ, բայց միշտ չի , որ կարելի է մասնակցին հասնել ճիշտ ժամանակին:

Մրցարշավի ապահովագրություն

Մրցարշավորդներից կպահանջվի ներկայացնել SOS/բժշկական տարհանման ապահովագրություն, նախքան նրանց թույլ տրվի սկսել մրցավազքը:

Ռեսուրսներ:

https://www.globalrescue.com/
https://www.trawickinternational.com/
https://www.imglobal.com/travel-insurance/

Բժշկի թուղթ

Մրցարշավորդներից կպահանջվի ներկայացնել բժշկի թուղթ գրանցման ժամանակ: Բժշկի գրառման մեջ պետք է հստակ նշվի, որ բժիշկը և հիվանդը քննարկել են Ascend Armena-ն և դրա միջոցառումների ֆիզիկական պահանջները, և որ բժիշկը հավաստու է, որ մրցարշավորդը չունի որևէ նախապայման/հիվանդություն, որը կկանխի նրա մասնակցությունը: